Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի ԹԻՎ 42-Ա, ՄԱՐՏԻ 17-Ի ԹԻՎ ԹԻՎ 45-Ա ԵՎ 46-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 42-Ա և 46-Ա որոշումների մեջ չեն պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանները:

Թիվ 45-Ա որոշման նախաբանում «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածին կատարված հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին, համաձայն որի հղումները կատարվում են հստակ և ուղղակի: Ուստի, պետք է հղում կատարել վերոգրյալ հոդվածի համապատասխան դրույթին:

Բացի այդ, որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածը բացակայում է:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
04.05.2020թ.